ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

JOURNAL OF ORIENTAL STUDIES

№ 22

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)
Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր
Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ
Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր
Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ
Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ
Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր
Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.
Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.դ.
Գրեկյան Երվանդ պ.գ.դ.
Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)
Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)
Էքմեքչյան Լեռնա PhD (ԱՄՆ)
Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա)
Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արաբագիտություն

Արաքս Փաշայան
ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՆ ԵՎ «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ». ԵՐԿԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....7-21

Գոռ Գևորգյան
ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ. ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ (1981-2014 ԹԹ.).....22-34

Վահե Հակոբյան, Տաթևիկ Մկրտչյան, Հայկ Քոչարյան
ԹՎԻԹԵՐԻ ԱՐԱԲԱԼԵՋՈՒ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ 2020Թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՋՈՐԴԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ (2020-2021ԹԹ.).....35-49

Տաթևիկ Մկրտչյան
ԻՄԱՄ ԱԼԻԻ ՆԱՄԱԿԸ ՄԱԼԻՔ ԱԼ-ԱՇԹԱՐԻՆ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴԱՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՎԱԽՈՒԹՅԱՆ ՅՈՒՐՕՐԻՆԱԿ ՄԻ ՆՄՈՒՇ.....50-61

Անանա Անտոնյան
ՏԱԲԱԿԱԹ ԺԱՆՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ 9-ՐԴ ԴԱՐԻ ԱՐԱԲԱՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ.....62-75

Սպարտակ Բաղդասարյան
2005 Թ.-Ի ԻՐԱՔՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՐՋ.....76-94

Թյուրքագիտություն

Լուսինե Խաչատրյան, Անուշիկ Մարտիրոսյան, Ալեքսանդր Սաֆարյան
ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ÜZERE ԵՎ DİYE ՀԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԴՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ.....95-109

Սամվել Ռամազյան
ՆՈՐԱՀԱՅՏ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐ «ՔՅՈՌՕՂԼԻ» ԷՊՈՍԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐՈՒՄ 110-116

Թամարա Աղամալյան
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ 1965-1969 ԹԹ. 117-131

Ալբինա Մուրադյան
ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ 132-152

Իրանագիտություն

Արփինե Առուշանյան
ՀՈԳՈՒ ՎԵՐԱՄԱՐՄՆԱՎՈՐՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ԾԱՅՐԱՀԵՂ ՇԻԱՅԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐՈՒՄ 153-167

Լիանա Պետրոսյան
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԻԻՀ-ՈՒՄ Մ. ԱՀՄԱԴԻՆԵԺԱԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (2005-2013ԹԹ.) 168-182

Ժաննա Վարդանյան *
ԻՐԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ ՀԵՏՈ 183-195

***

Աշխեն Հովսեփյան
ՀԱՅ-ՀՆԴԿԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 196-204

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ
Արտյոմ Տոնոյան
Հովհաննես Խորիկյան, Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումը, «Էլդորադո» հրատ., Հայաստանի Հանրապետություն, Գյումրի, 2021, 456 էջ: 205-211

CONTENT

Arabic Studies

Araks Pashayan
SAUDI ARABIA AND THE «ARAB SPRING». THE POLICY OF DOUBLE STANDARDS 7-21

Gor Gevorgyan
TRANSFORMATION OF EGYPT`S ARAB POLICY: OPPORTUNITIES AND CHALLENGES (1981-2014) 22-34

Vahe Hakobyan, Tatevik Mkrtchyan, Hayk Kocharyan
DISCUSSION OF THE MAIN DISCOURSES OF THE 2020 44-DAY ARTSAKH WAR AND THE SUBSEQUENT PERIOD IN THE ARABIC-LANGUAGE TWITTER (2020-2021). 35-49

Tatev Mkrtchyan
IMAM ALI'S LETTER TO MALIK AL-ASHTAR AS A MODEL OF JUST GOVERNANCE/RULERSHIP, RELIGIOUS RIGHTEOUSNESS AND PIETY 50-61

Anna Antonyan
THE FORMATION OF THE ṬABAQĀT GENRE IN THE 9TH CENTURY ARAB-MUSLIM WRITTEN CULTURE 62-75

Spartak Baghdasaryan
THE 2005 IRAQI CONSTITUTION AND THE FORMATION OF A NEW SYSTEM OF GOVERNMENT 76-94

Turkic Studies

Lusine Khachatryan, Anushik Martirosyan, Alexander Safaryan
ON THE PECULIARITIES OF TEACHING TERMS FORMED WITH PREPOSITIONS ÜZERE AND DİYE OF THE TURKISH LANGUAGE AND THEIR COLLOCATIONS IN THE ARMENIAN LANGUAGE 95-109

Samvel Ramazyan
NEWLY DISCOVERED ARMENIAN PERSONAGES IN
THE TURKISH VERSIONS OF THE EPIC "KOROGLU" 110-116

Tamara Aghamalyan
IDEOLOGICAL BASIS OF THE REPUBLICAN PEASANTS'
NATION PARTY 1965-1969 117-131

Albina Muradyan
PUBLIC PERCEPTIONS AND MANIFESTATIONS OF RELIGIOUS
AND TRADITIONAL BELIEFS DURING
THE CORONAVIRUS PANDEMIC IN TURKEY 132-152

Iranian Studies

Arpine Arushanyan
THE IDEA OF THE TRANSMIGRATION OF SOULS
IN EXTREME SHIA SECTS 153-167

Liana Petrosyan
HUMAN RIGHTS AND FREEDOM OF SPEECH IN IRI DURING
M. AHMADINEJAD'S PRESIDENCY (2005-2013) 168-182

Zhanna Vardanyan
IRAN'S POSITION DURING AND AFTER
THE THIRD ARTSAKH WAR 183-195

***

Ashkhen Hovsepyan
ARMENIAN-INDIAN RELATIONS. HISTORICAL
OVERVIEW 196-204

BOOK REVIEW

Artyom Tonoyan
Hovhannes Khorikyan, The Administrative Divisions of Achaemenid
Iran, "Eldorado" publisher, RA, Gyumri, 2021, 456 p: 205-211

Թամարա Աղամալյան[1]

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ 1965-1969 ԹԹ.[2]

Բանալի բառեր՝ *Թուրքիա, ՀԳԱԿ, պանթյուրքիզմ, ազգայնականություն, Ալփարսլան Թյուրքեշ, Նիհալ Աթսըզ*

Վերջին տարիներին Թուրքիայում հստակ նկատելի է թուրք ազգայնականության ծայրահեղական՝ պանթյուրքիստական գաղափարախոսության ակտիվացում, որը երկրի արտաքին քաղաքական ուղեծրում աստիճանաբար դառնում է գերակա ուղղություն: Այս հանգամանքը պայմանավորված է ոչ միայն Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայյիփ Էրդողանի ծավալապաշտական նկրտումներով, այլև վերջինիս քաղաքական դաշնակից, պանթյուրքիզմի գաղափարախոս՝ Ազգայնական շարժում կուսակցության (ԱՇԿ, Milliyetçi Hareket Partisi, MHP) դերակատարության ակտիվացմամբ: Տեսանելի ապագայում Թուրքիայի հասարակական-քաղաքական գործընթացներում ԱՇԿ դերակատարության աճի և գործունեության ակտիվացման բոլոր հնարավոր կանխատեսումներն արդիական են դարձնում այս կուսակցության գաղափարական հիմնադրույթների ակունքներին հետհայաց կատարելու անհրաժեշտությունը:

[1] ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող
Էլ. հասցե tomaghamalyan@yahoo.com

[2] Հանրապետական գյուղացիական ազգային կուսակցությունն Ազգային կուսակցության իրավահաջորդն էր: Այն ստեղծվել էր 1954 թ. օգոստոսի 10-ին Օսման Բյոլուքբաշի կողմից՝ որպես Գյուղացիական ազգային կուսակցություն, իսկ որոշ ժամանակ անց միանալով Գյուղացիական կուսակցությանը՝ վերանվանվեց ՀԳԱԿ, այդ մասին տե՛ս Yanardağ M., MHP Değişti mi? Ülkücü Hareketin Analitik Tarihi, İstanbul, 2002, s. 30-31

Հոդվածի նպատակն է վեր հանել ծրագրային և գաղափարական հիմնադրույթները ԱՇԿ ձևավորման սկզբնափուլում (1965-1969 թթ.), երբ այն քաղաքական դաշտում ներկայանում էր որպես Հանրապետական գյուղացիական ազգային կուսակցություն (հետայսու՝ ՀԳԱԿ, թուրք՝. Cumhuriyetçi Köylü Millet Partisi – CKMP): Մասնավորապես, քննարկվում են հարցեր, որոնք վերաբերում են ԱՇԿ-Ի՝ որպես քաղաքական ուժի, կազմավորման գաղափարական-արժեհամակարգային առանձնահատկություններին, թուրք ազգայնական միջավայրում դրանց ընկալումներին: Հատկապես ուշադրություն է դարձվում կուսակցության անդամների շրջանում գաղափարական տարբեր ուղղությունների տարբնկալումներին և հակասություններին:

1960 թ. մայիսի 27-ին Թուրքիայում տեղի ունեցավ ռազմական հեղաշրջում: Իշխանությունն իր ձեռքը վերցրեց 38 զինվորականից բաղկացած Ազգային միասնության կոմիտեն (ԱՄԿ, թուրք.՝ Milli Birlik Komitesi), որի ղեկավար ընտրվեց գեներալ Ջեմալ Գյուրսելը[3]: Սակայն երկիրը ղեկավարելու հետագա ընթացքի հետ կապված միասնական ծրագրի բացակայությունը և ԱՄԿ-ի անդամների միջև ներանձնական մրցակցությունը հանգեցրեց լուրջ տարաձայնությունների. կառույցը բաժանվեց երկու թևի՝ պահպանողականների և արմատականների: Վերջինիս կազմում իր ազգայնամոլական հայացքներով առանձնանում էր Ալփարսլան Թյուրքեշը, ով հետագա գրեթե չորս տասնամյակների ընթացքում ղեկավարելու էր պանթյուրքիստական շարժումը Թուրքիայում[4]:

[3] Erken A., Ideological Construction of the Politics of Nationalism in Turkey: The Milliyetçi Hareket Partisi (MHP), 1965-1980, Nationalism and Ethnic Politics, London, 2014, p. 202.

[4] Ալփարսլան Թյուրքեշը (Ալի Արսլան) ծնվել է 1917 թ. Կիպրոսի Նիկոսիա քաղաքում: 1933 թ. ընտանքի հետ միասին տեղափոխվում է Ստամբուլ, որտեղ էլ 1938 թ. ավարտում է ռազմական ակադեմիան՝որպես հետևակային լեյտենանտ: 1944 թ., պանթյուրքիաստական հայացքներ տարածելու համար դատապարտվում է ազատազրկման 9 ամիս 10 օր: 1951 թ. ստանում է մայորի կոչում, իսկ 1955 թ.

1960 թ. նոյեմբերի 13-ին արմատականների խմբի բոլոր 14 անդամները[5] երկրում ռազմական դիկտատուրա սահմանելու փորձերի համար հեռացվեցին ԱՄԿ-ից և զինված ուժերից[6]: Ա. Թյուրքեշն արտաքսվեց Նյու Դելի՝ դիվանագիտական ծառայության[7]: Սակայն, 1963 թ. փետրվարին Թյուրքեշը վերադարձավ Թուրքիա, թողեց ռազմական ծառայությունն ու անցավ քաղաքական գործունեության՝ որոշում կայացնելով անդամագրվել ՀԳԱԿ-ին, որն այդ ժամանակաշրջանում դեռևս ուներ ժողովրդական, պահպանողական, ազգայնական (demokrat, muhafazakâr, milliyetçi) ուղղվածություն և վայելում էր հիմնականում գյուղացիության և միջին դասի համակրանքը[8]:

1965թ. փետրվարի վերջին Թյուրքեշն իր ավելի քան 60 համախոհների հետ միասին մասնակցում է կուսակցության հերթական համագումարին, ինչի արդյունքում մեկ ամիս անց տեղեկատվություն է տարածվում արմատականների խմբի 14 անդամներից Ալփարսլան Թյուրքեշի, Մուզաֆֆեր Օզդաղի, Ռըֆաթ Բայքալի, Ահմեթ Էրի և Դյունդար Թաշերի կուսակցությանն անդամագրվելու մասին, իսկ 1965 թ. հունիսի 19-ին նրանց են միանում Մուսթաֆա Քափլանը, Ֆազըլ Աքքոյունլուն, Շեֆիք Սոյուջեն, Նուման Էսինը, իսկ հունիսին՝ Մյունիր

Պենտագոնում նշանակվում ՆԱՏՕ-ի Թուրքական ներկայացուցչության հանձնաժողովի անդամ: 1969-1997 թթ. ղեկավարել է Ազգայնական շարժում կուսակցությունը: Ալփարսլան Թյուրքեշի կենսագրական մանրամասնությունները տե՛ս Yalçın H., Alparslan Türkeşin Bilinmeyen Anıları, İstanbul, 2019; Tombuloğlu T., Alparslan Türkeşin Hayatı, Doğumunun 100. Yılında Alparslan Türkeş'e Armağan, Ankara, 2018, ss. 9-24

[5] ԱՄԿ արմատականների խմբի 14 անդամներն էին՝ Ալփարսլան Թյուրքեշ, Մուզաֆֆեր Օզդաղ, Ռըֆաթ Բայքալ, Ահմեթ Էր, Դյունդար Թաշեր, Մուսթաֆա Քափլան, Ֆազըլ Աքքոյունլու, Շեֆիք Սոյուջե, Նուման Էսին, Մյունիր Քյոսեօղլու, Իրֆան Սոլմազեր, Մուզաֆֆեր Քարան, Օրհան Քաբիբայ և Օրհան Էրքանլը, այդ մասին տե՛ս Tekin A., Alparslan Türkeş ve Liderlik, Ankara 2011, s. 167.

[6] Weiker W. F., The Turkish Revolution 1960-1961. Aspects of Military Politics, Washington, 1963, p. 131.

[7] Landau M. J., Radical Politics in Modern Turkey, Leiden 1974, p. 207.

[8] Rubin B., Metin H., Political Parties in Turkey, London, 2002, p. 26.

Քյոսեօղլուն[9]: Այսպիսով, 14-ի խմբի անդամներից 9-ը հետևում են Թյուրքեշին և դառնում ՀԳԱԿ լիիրավ անդամ:

Հարկ է նշել, որ Ա. Թյուրքեշի և նրա համախոհների մուտքը ՀԳԱԿ վերջինիս մի խումբ անդամների կողմից բացասաբար է ընդունվում: Առավելապես ընդդիմադիր կեցվածք դրսևորեց Թուրքիայի պաշտպանության նախկին նախարար և ՀԳԱԿ գերագույն վերահսկիչ հանձնաժողովի անդամ Հասան Դինչերը, ով պահանջեց կուսակցությունից հեռացնել Ա. Թյուրքեշին՝ նշելով, որ «վերջինս օգտագործելու է կուսակցությունն իր նպատակների իրականացման համար»[10]:

1965 թ. օգոստոսի 1-ին ՀԳԱԿ համագումարում 698 կողմ ձայնով Թյուրքեշն (Ա. Թահթաքըլըչ՝ 516 ձայն) ընտրվեց ՀԳԱԿ նախագահ, ինչի արդյունքում վերջինիս ընդդիմադիրները լքեցին կուսակցությունը[11]: Մուզաֆֆեր Օզդաղը նշանակվեց կուսակցության Գլխավոր քարտուղար, իսկ Նուման Էսինը՝ փոխնախագահ[12]: Այսպիսով, այդ համագումարից հետո ՀԳԱԿ դարձավ թուրք ազգայնականության գաղափարական և քաղաքական մարմնավորումը:

ՀԳԱԿ գաղափարական հիմնադրույթներն ամփոփվեցին 254 կետից բաղկացած ծրագրում, որը ստացավ «Զարգացած և ուժեղ Թուրքիայի համար» անվանումը[13]: Կուսակցության պաշտոնական փաստաթուղթը մեծամասամբ կազմվել էր Նուման Էսինի և Մուզաֆֆեր Օզդաղի կողմից և ուներ տարաբնույթ բազմաբովանդակ օրակարգ: Հատկապես մեծ տեղ էր հատկացված ազգի և ազգայնականության վերաբերյալ կուսակցության տեսլականին: Այսպես. ծրագրի 6-7-րդ կետերում, որոնք դարձան

[9] Yaşlı F., Kinimiz Dinimizdir Türkçü Faşizm Üzerine Bir Inceleme, İstanbul, 2014, s. 204.
[10] Landau M. J., Radical Politics in Modern Turkey, p. 208.
[11] Uzun T., Türk milliyetçiliği ve MHP, Ankara, 2005, s. 273.
[12] Yaşlı F., նշվ. աշխ., էջ 204:
[13] Ծրագրի ամբողջական դրույթներին կարելի է ծանոթանալ՝ Müreffeh ve Kuvvetli için, CKMP Programı, Ankara, 1965.

Թյուրքեշի ազգայնական գաղափարաբանության հիմնաքարերը, նշվում էր. *«Յուրաքանչյուրն, ով իրեն կոչում է թուրք, և զգում է իրեն որպես թուրք, կոչվում է թուրք: Մեր կուսակցությունը մերժում է ռասիզմը: Թուրք լինելը պայմանավորված է թուրք ազգի պատկանելիության գիտակցությամբ, թուրքական մշակույթի նկատմամբ սիրո զգացումով, թուրքի նման ապրելու կամքով և թուրքական պետության նկատմամբ հավատարմությամբ: Մենք հավատում ենք թյուրքականության փառահեղ անցյալին և պայծառ ապագային»*[14]:

Անհրաժեշտ է ընդգծել, որ ծրագրում զետեղված այս դրույթները սուր հակադրության մեջ էին գտնվում պանթյուրքիզմի գաղափարախոսության առաջամարտիկներից և կուսակցության գաղափարական հայրերից մեկի՝ Նիհալ Աթսըզի հայացքների հետ: Վերջինս անթաքույց արտահայտում էր իր ռասիստական հայացքները և կողմ էր էթնիկ ազգայնական մոդելին: Աթսըզի հայեցակարգում *թուրքական ազգային ինքնությունը կապված էր արյան հետ*: Թուրքիայում ծնվելը կամ թուրքերեն խոսելը դեռևս բավարար չէր թուրք լինելու համար: Ավելին, զարգացնելով իր այս տեսակետը, Աթսըզն այն համոզմունքն էր հայտնում, որ պետական աշխատավայրերում չպետք է ծառայեն թուրքական արյուն չունեցող քաղաքացիները: Մերժելով բոլոր համեմատությունները գերմանական ռասիզմի հետ՝ նա նշում էր, որ իր գաղափարների հիմքում հայրենական ռասիզմն է, որը նախորդել է գերմանականին: Աթսըզը հպարտ էր՝ իրեն համարելով ռասիստ և պանթյուրքիստ[15]: Վերջինիս համար թյուրքականության հետևորդը նա էր, ով հավատում էր թյուրք

[14] Müreffeh ve Kuvvetli için, CKMP Programı, Madde 6-7, s. 4-5
[15] Balci T., The Rise and Fall of Nine Lights Ideology, Politics, Religion & Ideology, Vol 12, № 2, p. 149.

ռասայի գերազանցությանը[16]: Ուստի կարող ենք փաստել, որ Աթսըզի գաղափարները հակադրվում էին ոչ միայն կուսակցության ծրագրային դրույթներին, այլև անձամբ Ա. Թյուրքեշի գաղափարախոսությանը:

Կուսակցության ղեկավարության և անդամների շրջանում տարբեր մոտեցումներ կային, թե ազգայնականության գաղափարախոսության որ ասպեկտներ են առաջնահերթ: Համաձայն Նուման Էսինի՝ «ազգայնականությունը պետք է ծառայեր որպես գործիք՝ Թուրքիան վերածելու ուժեղ տնտեսությամբ արդի հզոր պետության»: Այսինքն ազգայնականությունն ինքնանպատակ չէր, այլ գործիքակազմի բաղկացուցիչ, որը թույլ կտար իրականացնել Թուրքիայի զարգացումը[17]:

Չնայած որոշ տարաձայնությունների՝ Թյուրքեշի ու ՀԳԱԿ-ի շատ անդամների հռետորաբանությունում շարունակաբար ընդգծվում էր քեմալական հիմնադրույթների և Աթաթյուրքի ժառանգության պահպանման անհրաժեշտությունը. աշխարհիկ ազգայնականության ստեղծման ընկալումներում այս քաղաքական գործիչների հայացքները համընկնում էին: Այդ մասին են վկայում նրանցից շատերի տարբեր ելույթներն ու հայտարարությունները: Այսպես, 1966 թ. իր նախընտրական ելույթում ՀԳԱԿ պատգամավոր Ռըֆաթ Բայքալը հայտարարում էր, որ իր կուսակցությունը կպաշտպանի թուրքական ազգայնականությունն իր «կատարյալ իմաստով»՝ (perfect sense) հետևելով Քեմալ Աթաթյուրքի գաղափարներին և բարեփոխումներին: Նրա պնդմամբ՝ Աթաթյուրքի «ազգայնականությունը, միակուսակցական ժամանակաշրջանում

[16] Bakırezer G., Nihal Atsız, in Bora T., Gülketingil M., Modern Türkiye'de Siyasi Düşünce, Cilt 4, İstanbul, 2002, s. 353.
[17] Türkeşçiler CKMP'ye Hâkim oldu, Milliyet, 02.08.1965

չարաշահվել և սխալ էր կիրառվել, քանզի իշխող Հանրապետական Ժողովրդական Կուսակցությունը հետապնդում ու հալածանքների էր ենթարկում նույնիսկ իր ազգայնական համակիրներին»[18]: ՀԳԱԿ-ի մեկ այլ անդամ Մուսթաֆա Քափլանը, ներկայացնելով ազգայնականության վերաբերյալ իր պատկերացումները, նշում է, որ «Աթաթյուրքի ազգայնականությունը կանգ է առել, և անհրաժեշտ է, այն հասցնել իր ավարտին»[19]: Կիսելով կուսակից ընկերների մոտեցումները քեմալական ազգայնականության վերաբերյալ՝ Թյուրքեշն իր մեկնաբանությունում շեշտում է. «իրենք տանելու են քեմալիզմի դրոշը, քանի որ դա է երկրում առկա խնդիրների լուծման միակ ուղենիշը»[20]:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին իր պանթյուրքիստական գաղափարախոսությամբ աչքի ընկած Ա. Թյուրքեշը ակտիվ քաղաքականություն մտնելու սկզբնափուլում (իմա. 1960-ականն թթ.), պայմանավորված աշխարհաքաղաքական իրողություններով, ստիպված էր որոշակիորեն սահմանափակել իր հռետորաբանությունն ու գործունեությունը: Թերևս դա էր պատճառը, որ կուսակցության ծրագրի արտաքին հարաբերությունների բաժնում չկար ոչ մի ուղերձ՝ պանթյուրքիստանան նկրտումներով, կամ որևէ կոչ՝ օգնելու արտերկրում ապրող թյուրքերին: Թեև 1960-ական թթ. վերջին ՀԳԱԿ-ը աջ արմատական քաղաքականության կարևոր դերակատարներից մեկն էր, այդուհանդերձ պանթյուրքիզմը կուսակցության գաղափարախոսության միակ բաղադրիչը չէր: Ըստ հայտնի թյուրքագետ Յակոբ Լանդաուի՝ պայմանավորված արտաքին քաղաքական իրողություններով և ներքաղաքական

[18] Erken A., նշվ. աշխ., էջ 204:
[19] Նույն տեղում:
[20] Նույն տեղում:

օրակարգերով՝ պանթյուրքիզմը հաճախ հետին պլան էր մղվում»[21]: Օրինակ՝ Մ. Օզդաղն իր հարցազրույցներից մեկում նշում է. «Թյուրքական համայնքի մի մասը ճնշված է այլ իմպերիալիստական երկրների կողմից: Վերջիններիս մոտ բացակայում է քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը, և ելնելով իրենց անլիարժեքության զգացումից՝ նրանք անընդմեջ ոչնչացրել են մեր մշակութային հարստությունը: Միանգամայն բնական է, որ մենք սիրում ենք նրանց (իմա. թյուրքական համայնքները), սակայն ողջախոհ պետությունները պետք է ունենան իրատեսական քաղաքականություն, իսկ 1960-ականներին մեր նպատակն էր ոչ թե ընդլայնել Թուրքիայի տարածքը, այլ պաշտպանել այն»[22]:

Ուսումնասիրելով կուսակցության գործունեությունը, կարող ենք փաստել, որ վերջինիս ղեկավարությունն այդուհանդերձ շարունակաբար հետևողական աշխատանք էր իրականացնում՝ հասարակության թիրախային խմբերին ազգայնամոլական հայացքներ ներարկելու ուղղությամբ: Այսպես, 1967 թ. «Թուրքական օջախ»-ի սրահում, ելույթ ունենալով թուրք ազգայնականների և ուսանողների բազմության առջև, Թյուրքեշը հայտարարում է, որ «Ռուսաստանում ապրող իրենց ցեղակիցները տառապանքի մեջ են… և վաղ թե ուշ Թուրքեստանը պատկանելու է թյուրքերին»[23]:

---

[21] Landau J. M., Pan-Turkism in Turkey, London, 1981, p. 166.
[22] Poulton H., Top Hat, Grey Wolf and Crescent, Turkish Nationalism and the Turkish Republic, New York, 1997, p. 148.
[23] Թուրքական թերթերի բյուլլետեն, 1967-1968, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ: «Թուրքեստան» հասկացությունը կիրառվել է դեռևս միջնադարից արաբապարսկական, եվրոպական և հայկական աղբյուրներում որպես թյուրքալեզու ցեղերի բնակության, հատկապես միջինասիական տարածքների ընդհանրական անվանում: Այս հասկացությունը նույն նշանակությամբ կիրառվել է արևմտյան և խորհրդային հասարակական գիտությունների բնագավառում: Թուրքական և թյուրքալեզու գիտական աշխարհը, «Թուրքեստան» հասկացության շրջանակները լայնացնելով, նրանում ներառում է թյուրքալեզու ժողովուրդների ոչ

Բացի այդ, պանթյուրքիզմի գաղափարախոսության տարածման հետևողական աշխատանքների արդյունքում այն ամրակցվում էր շատ թուրք երիտասարդների գիտակցության մեջ: 1960-ական թթ. վերջին ՀԳԱԿ-ի կողմից ստեղծվում են «գրոհայինների» ճամբարները[24], որտեղ նրանց կրթում և դաստիարակում էին թե՛ ֆիզիկապես, թե՛ գաղափարապես, և թե՛ հոգեպես: Հատուկ ուշադրություն էր դարձվում հատկապես «կոմանդոսների» գաղափարական պատրաստվածությանը՝ նրանց մեջ սերմանելով պանթյուրքիստական գաղափարներ: Դրան մեծապես նպաստում էր ազգային, կրոնական և մշակութային արժեքների խորացված ուսումնասիրությունը: Այդ նպատակով տարբեր համալսարանների դասախոսներ և հոգևորականներ, հիմնականում երեկոյան ժամերին դասախոսություններ էին անցկացնում Թուրքիայի պատմության և կրոնի վերաբերյալ[25]: Բացի այդ, ճամբարներում երիտասարդների համար հնչում էր թուրքական ժողովրդական, ինչպես նաև ադրբեջանական և «թուրքեստանյան» երաժշտություն[26]:

Ծրագրի կարևոր դրույթներից էր կրթության բնագավառում իսլամի ուսուցման պահպանման և բարեփոխման գաղափարը: Մասնավորապես, 95-100-րդ կետերում ընդգծվում էր, որ Թուրքիայում կրոնական կրթությունը պետք է ենթարկվի բարեփոխումների՝ ժամանակակից հասարակության

միայն զուտ լեզվական ընդհանրացումը, այլ նաև մեկ ամբողջական էթնոմշակութային համակարգի պատկանելիությունը:

[24] 1960-ական թթ վերջին կազմավորվեցին ազգայնամոլական շարժման առաջնորդ Ալփարսլան Թյուրքեշի պանթյուրքիստական կառույցները: Ծայրահեղ ազգայնական գաղափարների հիման վրա ստեղծվեցին ՀԳԱԿ կողմից կառավարվող «գրոհայինների ճամբարները», որի առաջնային նպատակն էր Թուրքիայում ակտիվացող ձախերի՝ կոմունիստական շարժման դեմ պայքարը, այդ մասին մանրամասն տե՛ս Bozkurt C., 1968 Olaylarının Türk Siyasetine Etkisi: Milliyetçi Hareketin "Komando" Kampları, Türk Dünyası Araştırmaları, Cilt 117, s. 67-84.

[25] Նույն տեղում, էջ 75:

[26] Soylu D. (Yılmaz Yalçiner), Komando Sorunu, Gençler araç mı, amaç mı?, Ankara, 1975, s. 40.

պահանջներին համապատասխան՝ ներառելով ազգային մշակույթի տարրեր: Զարգացնելով բարեփոխումների անհրաժեշտությունը՝ ՀԳԱԿ պաշտոնական փաստաթղթում հիմնավորվում էր այնպիսի քաղաքականության իրականացման անհրաժեշտությունը, որը կապահովեր աստվածաբանական ֆակուլտետների, կրոնական ավագ դպրոցների և իսլամական ակադեմիաների արդյունավետ գործունեությունը[27]: Այսպիսով, ծրագրի դրույթների ուսումնասիրությունը վկայում է, որ ՀԳԱԿ սկզբնական շրջանում իսլամը դիտարկում էր բացառապես մշակույթի և կրթության բաղադրիչ, ավելին՝ մինչ 1967 թ. հակված չէր որևէ առնչություն ունենալ քաղաքական իսլամի հետ և խուսափում էր իր հռետորաբանության մեջ օգտագործել իսլամական խորհրդանիշներ:

Հետագայում, սակայն, Ա. Թյուրքեշն ու կուսակցության որոշ անդամներ վերանայում են իրենց մետեցումները կրոնի հարցում: Մեծապես ազդված լինելով գրող և փիլիսոփա Ահմեթ Արվասիի «թուրք-իսլամական իդեալի» ուսմունքից[28]՝ արդեն 1967 թ., Ա. Թյուրքեշն առաջ է քաշում թյուրքիզմի և իսլամականության միասնության գաղափարը, հայտարարելով, որ ազգայնականությունն իսլամի միաձուլումն է թյուրքական գիտակցության հետ[29], և կոչ էր անում իր լսարանին հետևել Ղուրանին, ինչպես թուրք ժողովուրդն ապրել էր մինչ այդ պահը[30]:

[27] CKMP Programı, Müreffeh ve Kuvvetli Türkiye İçin, Madde 95-100, s. 30.
[28] Գրող և փիլիսոփա Սեյյիդ Ահմեթ Արվասին (1932-1988) թուրք-իսլամական համադրություն գաղափարախոսության հետևորդներից մեկն է: Հետագայում հրաժարվելով «համադրություն» արտահայտությունից, առաջ է քաշում «թուրք-իսլամական իդեալ» հայեցակարգը, համաձայն որի թյուրքականությունն ու իսլամը միասնության մեջ են: Այդ մասին մանրամասն տե՛ս Aslan Ö., A Turkish Muslim Between Islamism and Turkish Nationalism: Seyyid Ahmet Arvasi (1932-1988), Turkish Studies, Vol. 15, Issue 3, 2014, p. 519-535, Bora T., Can K., Devlet, Ocak, Dergâh, 12 Eylül'den 1990'lara Ülkücü Hareket, İstanbul, 1991.
[29] Cengiz F. Ç, Resistance to Change: the Ideological Immoderation of the Nationalist Action Party in Turkey, Turkish Studies, Vol. 22, Issue 3, 2021, p. 469
[30] Erken A., նշվ. աշխ., էջ 204:

Շեշտադրելով իսլամի կարևորությունը՝ Թյուրքեշն ընդգծում է. «Մեր կուսակցությունը երկրով մեկ տարածվում և ընդլայնվում է: ՀԳԱԿ զարգացմանը կործանարար կազմավորումները անհանգստությամբ և ցավով են հետևում: Մենք թուրք ազգի ազատագրումը տեսնում ենք ազգայնականության մեջ և ընդունում այն որպես իսլամի նկատմամբ հավատ և թյուրքականության գիտակցում: Իմ բոլոր կուսակցական ընկերները պետք է իմանան, որ թյուրքականությունն իսլամից անջատ չի կարող լինել: Թուրք ազգն ավելի քան հազար տարի իսլամադավան է, և այն ու թյուրքականությունը միահյուսված ու միմյանց լրացնող անբաժանելի իմաստներ են»[31]:

Կարծում ենք՝ նման կարճ ժամանակահատվածում կրոնի նկատմամբ քաղաքականության վերանայումը կապված էր նախ և առաջ երկրում կոմունիստական գաղափարախոսության տարածման հետ: ՀԳԱԿ ղեկավարությունն այն դիտարկում էր որպես հակակշիռ՝ Թուրքիայում ձախ կողմնորոշում ունեցող խմբավորումների դեմ պայքարում: Բացի այդ, իսլամը դարձավ հատկապես գյուղական հասարակության հայացքների վրա ազդեցություն գործադրելու կարևոր գործիք և մեծ դերակատարություն ունեցավ հանրային տրամադրությունների ուղղորդման առումով:

Թուրքիայում կոմունիստական գաղափարախոսության, ինչպես նաև ձախակողմյան ուժերի տարածմանը խոչընդոտելու հարցում ՀԳԱԿ ղեկավար շրջանակները մեծ կարևորություն էին տալիս հասարակության, հատկապես երիտասարդների դերակատարությանը: Ուստի 1965 թ. ընդունված ծրագրում հստակ ձևակերպված էր զինված հասարակություն ունենալու անհրաժեշտությունը: Մասնավորապես՝ ծրագրի 116-րդ հոդվածում նշված էր. «Ամբողջ ժողովրդին, արդի պատերազմի

[31] Yaşlı F., նշվ. աշխ., էջ 219:

արդյունքում առաջացած կործանումից պաշտպանելու համար, կտրվի հարկ եղած տեղեկությունը՝ կհիմնվեն կազմակերպություններ և հաստատություններ: Կապահովվի Թուրքիայի հնարավորությունների, աշխարհաքաղաքական պահանջին համապատասխան պաշտպանության և գոյատևման ուժը»[32]: Նշենք, սակայն, որ այն քննադատության արժանացավ ՀԳԱԿ շատ անդամների, հատկապես հնաբնակների կողմից: Վերջիններս, մեկնաբանելով իրենց տեսակետը, նշում էին, որ «Քաղաքացիական պաշտպանություն» վերնագիր ստացած հոդվածն իրականում միտված էր երկրի միլիտարիզացմանը, քանի որ նախատեսում էր բնակչության զինում՝ պետությանը սպառնացող վտանգի պարագայում[33]: Անհրաժեշտ է ընդգծել, որ հոդվածի վերոնշյալ դրույթն արտացոլում էր Ն. Աթսըզի՝ պատկերացումները երիտասարդության դաստիարակության վերաբերյալ: 1942 թ. մարտի 12-ին «Չընարբալթը» ամսագրում հրապարակվում է Աթսըզի՝ «Ինչպես պետք է դաստիարակվի թուրք երիտասարդը» հոդվածը, որտեղ մանրամասն ներկայացվում է հետևյալ հայեցակարգը: Տարրական դպրոցներում ռազմական պատրաստվածությունը պետք է պարտադիր դառնա, իսկ կարգապահությունը և պատիժը՝ կրթության անբաժանելի մաս: Ինչպես նաև ուսանողները պարտադիր պետք է կրեն համազգեստ և ենթարկվեն զինվորական օրենքների և տույժերի: Օտար լեզուների դասերը պետք է փոխարինվեն սպորտով և ռազմական դասընթացներով, իսկ դպրոցները՝ դառնան զինվորական կայազորներ[34]:

1967 թ. նոյեմբերի 24-25 կայացած ՀԳԱԿ համագումարում Ա. Թյուրքեշը վերընտրվում է նախագահի պաշտոնում: Նույն

[32] CKMP Programı, Müreffeh ve Kuvvetli Türkiye İçin, Madde 116, s. 33.
[33] Kadir K., Alparslan Türkeş, Türk Milliyetçiliği Fikri ve CKMP, Ankara, 2017, s. 119.
[34] Türk Gençliği Nasıl Yetişmelidir? (Hüseyin Nihal Atsız), https://www.bilgicik.com/yazi/turk-gencligi-nasil-yetismelidir-huseyin-nihal-atsiz/

համագումարում որպես կուսակցության պաշտոնական գաղափարարախոսություն՝ ընդունվում է Ա. Թյուրքեշի՝ 16 էջից բաղկացած գրքույկը՝ «9 լույսերը» (Dokuz Işık), որն առաջին անգամ տպագրվել էր 1965 թ. Ստամբուլում[35]: Ըստ էության՝ դրանք այն ուղղություններն էին, որոնք կարևորվում էին Թյուրքեշի կողմից: 9 լույսերն էին՝ ազգայնականություն (milliyetçilik), գաղափարապաշտություն (ülkücülük), բարոյականություն (ahlâkçılık), սոցիալականություն (toplumculuk), գիտություն (ilimcilik), ազատություն (hürriyetçilik), գյուղացիություն (köycülük), զարգացում և ժողովրդականություն (gelişmecilik ve halkçılık), արդյունաբերություն և տեխնիկա (endüstricilik ve teknikçilik): Համաձայն Ա. Թյուրքեշի, որպեսզի հնարավոր լինի պաշտպանել վերջին անկախ Թուրքական պետությունը, անհրաժեշտ է համախմբվել որևէ ազգային հայեցակարգի շուրջ: Նման հայեցակարգ, ըստ Թյուրքեշի, «9 լույսերն» է, ինչը «թուրք ազգի պատմության և մշակույթի վրա հենվող, դրանց հավատացող մի գաղափարախոսություն է»[36]:

Անդրադառնալով թուրք ազգայնամոլների գաղափարախոսության «9 լույսերին»՝ հարկ է նշել, որ ակադեմիական գրականության մեջ տակավին գոյություն չունի միասնական կարծիք՝ արդյո՞ք Թյուրքեշն իր գրքույկը պատրաստելիս ազդեցություն է կրել այլ գաղափարախոսներից: Թուրք հետազոտող, քաղաքագետ Թանըլ Բորան և Տեխասի համալսարանի պրոֆեսոր Թամեր Բալջին, Թյուրքեշի և «9 լույսերի» վերաբերյալ իրենց հոդվածներում այն համոզմունքն են հայտնում, որ «9 լույսերի» ձևակերպման հիմքում մեծ ներդրում է ունեցել փիլիսոփա, ազգայնականության վերաբերյալ իր

[35] Yaşlı F., նշվ. աշխ., էջ 206:
[36] Türkeş A., Dokuz Işık, İstanbul, 2010, s. 20.

աշխատություններով հայտնի Մյումթազ Թուրհանը[37]: Ներկայացնելով ազգայնականության իր ընկալումը՝ Թուրհանը ընդգծում է, որ «ազգային մշակույթը ազգի զարգացման առանցքային գործոնն է» և հակադրվում Աթսըզի ռասիստական ընկալումներին[38]: Թուրհանը և Թյուրքեշը շեշտում էին, որ թուրք համարվելու համար պարտադիր պայման չէ թուրքական արյուն ունենալը: Այդ մեկնաբանումն ամրագրվում է «9 լույսերում», որտեղ մասնավորապես ասվում է. «Թուրք ազգն ընդհանուր պատմությունից եկող, ընդհանուր գիտակցություն ունեցող, նույն կրոնին պատկանող, նույն պետությունը հիմնած և այդ պետությունը պաշտպանող մարդկանց ամբողջությունն է»[39]: Իսկ ահա Հյու Փոուլթոնը, հղում կատարելով Մ. Օզդաղի հարցազրույցին, նշում է, որ «9 լույսերի» թիվն ընտրվել էր, հաշվի առնելով ՀԺԿ կազմավորման ընթացքում Քեմալ Աթաթյուրքի կողմից հնչեցված 9 սկզբունքները և այն համոզմունքը հայտնում, որ որոշ «լույսեր» միանման էին Աթաթյուրքի «6 նետերին»[40]:

Համադրելով վերոնշվածը՝ կարող ենք փաստել՝ չնայած այն հանգամանքին, որ «9 լույսերի» սկզբունքների ձևակերպման հիմնարկեքում Թյուրքեշը չէր խուսափել փոխառություններից, այնուամենայնիվ այն դարձավ կուսակցության ուղենիշ՝ թուրք ազգայնամոլների համար դառնալով և՛ ծրագիր, և՛ գաղափարախոսություն, և՛ դոկտրին:

Այսպիսով, ուսումնասիրելով ՀԳԱԿ գաղափարական հիմնադրույթները 1965-1969 թթ., կարելի է եզրակացնել, որ կուսակցության առաջնորդները՝ Ա. Թյուրքեշի ղեկավարությամբ, իրենց գաղափարական ու ծրագրային սկզբունքները, բաղադրիչները և հիմնադրույթները ձևակերպում և զարգացնում

[37] Bora T., Alparslan Türkeş, in Bora T., Gülketingil M., Modern Türkiye'de Siyasi Düşünce, s. 692, Balci T., նշվ. աշխ., էջ 153:
[38] Balci T., նշվ. աշխ., էջ 153:
[39] Kuzu A., Alparslan Türkeş, Dokuz Işık Ülkücü Hareketin Tarihi, İstanbul, 2014, s. 316.
[40] Poulton H., նշվ. աշխ., էջ 146:

էին՝ ելնելով ներքին ու արտաքին գործընթացներից և իրողություններից՝ փորձելով գտնել իրավիճակային լուծումներ: Կուսակցությունն իր աշխարհայացքն անհրաժեշտության դեպքում ենթարկում էր ժամանակային փոփոխության, հմտորեն համատեղում ծայրահեղական և չափավոր հայացքները: Մասնավորապես, պաշտոնական փաստաթղթերում, խուսափելով պանթյուրքիզմի շրջանառությունից, ՀԳԱԿ ակտիվ գործունեություն էր իրականացնում ազգայնամոլական հայացքներ տարածելու ուղղությամբ՝ այդպիսով դառնալով Թուրքիայի Հանրապետության՝ պանթյուրքիզմի գաղափարախոսություն դավանող առաջին կուսակցությունը:

IDEOLOGICAL BASIS OF THE REPUBLICAN PEASANTS' NATION PARTY 1965-1969

Tamara Aghamalyan

(Summary)

To analyze the activities of the Nationalist Action Party of Turkey, the party's ideology of 1965-1969 was studied, when it represented the Republican Peasants' Nation Party in the political arena. The article presents in detail the ideological and program framework of the RPNP, its features. Different perceptions of certain ideologies within the party framework are mentioned.

ИДЕОЛОГИЧЕСКИЕ ОСНОВЫ РЕСПУБЛИКАНСКОЙ КРЕСТЬЯНКОЙ НАЦИОНАЛЬНОЙ ПАРТИИ В 1965-1969 гг..

Тамара Агамалян

(Резюме)

Для анализа деятельности Партии националистического движения Турции была изучена идеология партии 1965-1969 годов, когда она представляла Республиканскую крестьянскую национальную партию на политической арене. В статье подробно представлена идеологическая и программная структура РКНП и ее особенности. В статье делается ссылка на различные представления об определенных идеологиях внутри партийных кругов.